

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱՅՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵՋ

Մարտ 19ին, 2010, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ՝ Նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, գումարուեցաւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի ժողովը: Տէրունական աղօթքէն յետոյ Վեհափառ Հայրապետը օրհնութեան իր խօսքը ուղղեց անդամներուն: Նախորդ ժողովի արձանագրութեան հաստատումէն յետոյ, Խորհուրդի անդամները ձեռնամուխ եղան օրակարգի հարցերու քննարկման: Ժողովի ընթացքին ներկայացուեցան Մայր Աթոռի Մարտ 2009 թուի գործունէութեան տեղեկագիրը եւ տնտեսական զեկոյցը: Օրակարգի մէջ ընդգրկուած էին Հայ Եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռներուն, ներ-եկեղեցական եւ միջ-եկեղեցական կեանքին առընչուող հարցեր:

Ժողովին մէջ ամփոփուեցան Մարտ 16-18 Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ Կիրիլ Ա. Պատրիարքի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կատարած պաշտօնական այցի արդիւնքները: Նորին Սրբութիւնը զոհունակութեամբ անդրադարձաւ Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարքի այցելութեան, որ անգամ մը եւս փաստեց երկու եկեղեցիներու միջեւ գոյութիւն ունեցող ջերմ յարաբերութիւններու եւ սերտ համագործակցութեան մասին: Նորին Սրբութիւնը տեղեկացուց նաեւ, որ Կիրիլ Պատրիարքի այցի ընթացքին Մահմետականներու առաջնորդ՝ Շէյխ ուլ-իսլամ՝ Փաշա Ջատի եւ Կիրիլ Պատրիարքի անունով հրաւեր փոխանցուած է՝ մասնակցելու Ապրիլ 26-28 Պաքուի մէջ կայանալիք ԱՊՀ եւ Պալթեան երկիրներու հոգեւոր առաջնորդներու ժողովին: Այս առընչութեամբ Վեհափառ Հայրապետը յայտնեց ժողովի անդամներուն, թէ որոշ յստակացումներէն յետոյ վերջնական որոշում պիտի կայացնէ՝ յիշեալ ժողովին Ամենայն Հայոց Կաթողիկոսի մասնակցութեան վերաբերեալ:

Այնուհետեւ անդրադարձ կատարուեցաւ Վեհափառ Հայրապետի Փետրուար 17-19 Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կատարած այցին: Այցը կազմակերպուած էր Երուսաղէմի Հայոց Պատրիարքի ծննդեան 91րդ, քահանայական ձեռնադրութեան 70րդ եւ պատրիարքական գահակալութեան 20րդ տարեդարձներու առիթով կազմակերպուած ձեռնարկներուն մասնակցելու եւ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ՝ Սերժ Սարգսեանի կողմէ Պատրիարքին տրուած *«Սուրբ Մեսրոպ Մաշտոց»* շքանշանը յանձնելու առիթով: Ժողովը քննարկելով Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան հետ առընչուած հարցերը, ողջունեց Հայոց Պատրիարքին Նորին Սրբութեան բերած առաջարկը՝ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան մէջ Սրբոց Յակոբեանց Միաբանական Ընդհանուր ժողով գումարելու վերաբերեալ:

Ժողովը ի գիտութիւն ընդունեցաւ նաեւ Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքութեան Կրօնական ժողովի Ատենապետ՝ Գերշ. Տ. Արամ Արք. Աթէշեանի զեկոյցը՝ Կոստանդնուպոլսոյ Հայոց Աթոռակից Պատրիարքի ընտրութեան ընթացքին վերաբերեալ՝ վերահաստատելով փոխանցուած տեղեկութիւնները, որ Թուրքիայի իշխանութիւններուն ներկայացուած է Աթոռակից Պատրիարք ընտրելու վերաբերեալ դիմումը, սպասելով ընտրութիւն կատարելու համար համապատասխան արտօնութեան տրամադրման: Օրակարգի ընթացքին նիւթ դարձաւ նաեւ թեմական ներ-եկեղեցական վարչա-կառուցային բարեփոխումներ իրականացնելու ծրագիրը:

Ժողովը փակուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեան խօսքով եւ աղօթքով: